

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ  
1916—1917 թթ.  
ՄԱՐԴԱՀԱՄԱՐՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

ՏՊԵՑԱՆԻ ԳԻՐՔՍ ԱՐԴԵԱԾՈՅ  
ԱՎԵՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
Ա.Ռ Ի ՅԻՇԱՏԱԿ ՆՈՐՈԳ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ  
ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԵՎԱԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1916-1917, թթ.  
ՄԱՐԴԱՀԱՄԱՐՆԵՐՈՒՄ

A II  
83093


ԿԱԾՄՈՂՆԵՐ՝

Ա.Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ, Գ.Ռ. ԱԴԱՔԵԼՅԱՆ  
Գ.Լ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Ս.Ս. ՄԱՐՏԻՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1992



1897 թ. հունվարի 28-ի Համառուսաստանյան մարդաբանամարի նյութերը կարևոր աղբյուր են ինչպես ամրող Ռուսաստանի, այնպես էլ նրա բաղկացուցիչ մասը կազմող Արևել յան Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության համար։ Բայց այդ նյութերը, ինչպես նաև պաշտոնական ու ոչ պաշտոնական գանձապնդ հրատարակությունները, չեխն բավարարում XX դարի սկզբին առաջացած քաղաքական ու գիտական բազմաթիվ պահանջներին։ Ուստի 1910 թ. վիճակագիր-զիտականներ Ա.Ա. Կառնֆմանը, Պ.Պ. Սեմյոնով-Տյանշանսկին և այլոք հարց բարձրացրին Երկրորդ Համառուսաստանյան մարդաբանը անցկացնելու մասին։ Համապատասխան հաստատությունները արձագանքեցին նրանց 1913 թ. սկսվեցին նախապատրաստական աշխատանքները, նպատակ ունենալով գործը ավարտել 1915 թ.։ Սակայն առաջին համաշխարհային պատերազմը խանգարեց նրա ժամանակին իրազործմանը։

1916 թ. հուլիս-օգոստոս ամիսներին անցկացվեց Համառուսաստանյան գյուղատնտեսական հաշվեգրում, որի արդյունքները լույս-տեսան Պետրոգրադում, 1916-1917 թթ. ։ Նրեց թողարկումներով՝ Դրանցից երկրորդը նվիրված էր Կովկասին<sup>1</sup>։

Այս երկրամասում հաշվեգրման անցկացումը համեմատարար դժվար էր, քան կայսրության այլ շրջաններում, որովհետև Կովկասում չկար գյուղատնտեսական կանոնավոր վիճակագրություն, իսկ եղածը Հողագործության մինիստրության լիազորի վարչության վերաբնակեցման մասին վիճակագրական բաժինն էր, որ գործում էր Թիֆլիսում։ Այդ բաժնին կից ստեղծվել էր Կովկասի հաշվեգրման կենտրոնական բյուրո, որի մեջ մտնում էին վիճակագիրներ և անասնաբուժական վարչության ներկայացուցիչներ։ Նրանց դեկավարում էին երկրամասի ընդհանուր հաշվեգրումը, իսկ առանձին նահանգներում այն անցկացնում էին ժամանակավոր հանձնածողությունները, որոնք բաղկացած էին պաշտոնության հասարակական ինքնակառավարումների, գյուղական հասարակությունների, կոոպերատիվների և այլ հաստատությունների ներկայացուցիչներից<sup>2</sup>։

1916 թ. գյուղատնտեսական հաշվեգրումը Կովկասում, այնուամենայնիվ, անցկացվեց այն ծրագրով, ինչ եվրոպական Ռուսաստանում, հաշվի առնելով, ինարկե, տեղական առանձնահատկությունները։ Այսպիս, օրինակ, ցուվորները գրանցվում էին այտեղ, որտեղ կատարվում էր նրանց հաշվեգրումը, նշելով նաև այն նահանգների կամ գավառների անունները, որտեղից դուրս են եկել։ Խոշոր եղջերագոր անասունները գրանցվում էին առանձին։ Դեպք "Преодварительные итоги Всероссийской сельскохозяйственной переписи 1917г.", вып. II, Кавказ, Петроград, 1917.

Յանքերի մեջ հաշվում էին ոչ միայն դաշտերի, այլև բանջարանոցների ու այգիների տարածները : Եթե անհնար էր տեղեկություններ ստանալ տնտեսատերերից, հավաքում էին դրանք հարեաններից, ազգականներից կամ զյուղական իշխանություններից: Ռազմական զործողությունների և տեղական դժվար հաղթահարելի պայմանների պատճառներով հաշվեգրումներ չանցկացվեցին Բաթումի, Կարսի ու Դաղստանի մարզերում, Ազգաթաշայի օկրուգում, Բարձի Խանագի մեծ մասում և Չուբայսիի, Թիֆլիսի ու Ելիսավետափոլի Խանագների մի շարք վայրերում: Ինչպես կայսրությունում ոմննուր, այնպես էլ Կովկասում զյուղատնտեսական հաշվեգրումից դուրս մնացին քաղաքներն ու մերժերկաթուղային շրջանները<sup>2</sup>:

1916 թ. հաշվեգրումը Կովկասում սկսվեց զգալիորեն ուշ, քան եվրոպական Ռուսաստանում: Դա զայմանավորված էր Պետրոգրադից համապատասխան մասնագետների ուշ ժամանումով: Երկրամասի Խանագներում ու մարզերում այն ժեռնարկվեց հունիսի երկրորդ կեսին ու ավարտվեց օգոստոսի 30-ին: Երեանի Խանագում հաշվեգրման աշխատանքները սկսվեցին հունիսի 15-ին և վերջացան օգոստոսի 30-ին, իսկ արդյունքները մայրաքաղաք ուղարկվեցին Հոկտեմբեր-դեկտեմբերին և նույնիսկ 1917 թ. փետրվարին: Այդ ուշացման պատճան այն էր, որ հաշվեգրողները /զերազանցապես ուսուցիչներ ու աշակերտներ / դեռ նյութերը կենարոն չուղարկած ցրվել էին: Թողարկման խմբագրությունը հաշվեգրման աշխատանքները զնանառում էր բավարար, հիմք ընդունելով մասնավորապես այն հանգամանքը, որ որոշ տնտեսությունների տվյալները երկրորդ անգամ ուսումնասիրնելիս ու հաշվարկելիս, տեսել էին, որ տարբերությունն առաջինի համեմատությամբ կազմել էր չնշին՝ 10 օ/օ-ից ոչ ավելի:

Ի՞նչ հարցեր են լուսաբանվում Կովկասի 1916 թ. զյուղատնտեսական հաշվեգրման մեջ: Նախ՝ բերվում են զյուղացիական ու մասնատիրական կամ կալվածատիրական տնտեսությունների, նրանց ողամբարկանց ու կանանց թվաքանակը,

, ապա՝ զյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունները, այնուհետև՝ անասունների գլխացանակը: Հաշվեգրման ավյալները լուսաբանում են նաև այն հարցը, թե յուրաքանչյուր զյուղացիական ու մասնատիրական 100 մարդուն որքան ցանքատարածություն ու անասուն է ընկնում: Պարզվում է, որ Արևելյան Հայաստանում կալվածատիրերը շուրջ 2,5 անգամ ավելի ունեն ցանքեր ու անասուն, քան զյուղացիները: Բայց նաև պարզվում է, որ նրանց եզներ ավելի զիշ ունեն, քան զյուղացիները: Դա մցատրվում է նրանով, որ կալվածատերերը, իրեն կանոն, չեին վարում սեփական տնտեսություն, ավելորդ էին համարում բանող անասուն պահելը:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 1-2:

4.

Սակայն 1916 թ. գյուղատնեսական հաշվեզրումն ունի մի շարք թերություններ, այն բաց է թողնում գյուղական բնակչության մի մասը, հնարավորություն չի տալիս որոշելու գյուղացիության սոցիալական շերտավորումը, չի անլրադառնում բնակչության ազգային կազմին, գյուղատնեսական տեխնիկայի կատարելագործման ու գարգարման և այլ հարցերի:

○ ○ ○

1917 թ. Փետրվարյան բուրժուազիստկրատական հեղափոխությունից հետո Ռուսաստանում նոր ուժով ծավալվեցին գյուղական շարժումները, ավելի սրբացին հօղային հարցը և նրանից ըխող հետևածքները: Ժամանակավոր կառավարությունը նույն թվի մարտի 11-ին հարկադրված նղավ ստեղծել հանձնաժողով, հանձնարարելով նրան ուսումնասիրել հողատիրության ու հոգօգտագործման վիճակը: Ապրիլի 18-22 Հողագործության մինիստրությունը Մոսկվայում հրավիրեց վիճակագիրների համագումար, որը հաստատեց Համառուսաստանյան գյուղատնեսական և քաղաքային մարդանամարի ծրագիր: Այլ ծրագիրը պետք է սպառիչ պատասխան տար կառավարությանը մասնատիրական ու գյուղացիական հողատիրության և հողօգտագործման մասին: Ի տարբերություն 1916 թ. գյուղատնեսական հաշվեզրման, 1917 թ. մարդանամարը ընդգրկելու էր Ռուսաստանի ամբողջ բնակչությունը, ընդ որում ոչ միայն առկա, այլև մշտական կեցողներին, նկատի ունենալով թե զորակոչվածներին, թե ուզմագերիներին ու փախտականներին<sup>1</sup>:

1917 թ. մայիսի 5-ին ժամանակավոր կառավարությունը օրենք հրատացակեց մարդանամար անցկացնելու մասին: Այն պետք է իրազործվեր նույն թվի ամուսնը և ընդգրկեր ողջ Ռուսաստանը, քացառությամբ ֆինլանդիայի /ուր այդ գործը գտնվում էր քարվոք վիճակում/ և թշնամու կողմից զրաված տարածությունների : Մարդանամարի իրազործման ժամկետները կոնկրետ չեն նշվում, բայց ասվում էր, որ այն պետք է սկսել հացանատիկը ցանելուց /ապրիլ-մայիս/ և ավարտել նրանց հնձի օրերին, այսինքն՝ օգոստոսի 15-ից սեպտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում: Բայց ժամանակավոր կառավարությունը չկարողացավ հատկացնել համապատասխան միջոցներ, որի պատճռով մարդանամարի ավարտումը ձգձգվեց:

Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում մարդանամարի աշխատանքներն սկսվեցին 1917 թ. հունիսին: Գյուղացիական տնտեսություններն ուսումնասիրելու համար առաջադրվեց քարտի երկու ձև՝ համառարձ /ըլուսոհ/ և ընտրվուի /выборочный/: Առաջինը պահանջում էր

<sup>1</sup> Տես Д. С. Гапоненко, В. Н. Кабузин, Материалы сельско-хозяйственных переписей 1916-1917 гг., как источник определения численности населения России на конец Октябрь. рев. "История СССР", 1961, №6, с. 103/

<sup>2</sup> 1917 թ. Մարդանամարի Արևելյան Հայաստանի վերաբերյալ նյութերը տես Հայաստանի Հանրապետության ԿՊԴԱ, // 125 Փոնդում:

Հետազոտել եթե ոչ ամբողջ գյուղացիությունը, զոնե նրա մեծ գանգված-ները, իսկ երկրորդը՝ նրա 2 տոկոսը: Բայց երկուսն էլ առաջադրում էին նույն հարցերը, առանց որևէ տարրերության: Իսկ ի՞նչ հարցեր էին դրանք: Յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը հատկացվում էր հատուկ քարտ, որի մեջ նշվում էին տնտեսատիրոջ ու նրա ընտանիքի անդամների անունները, ազգանուններն ու հայրանունները, սեռը, տարիքը, զրագիտությունը, աշխատունակությունը, զբաղմունքը, գյուղատնտեսական աշխատանքներին մաս-նակցելը, ազգային ու դասային պատկանելությունը, ընակության վայրը և այլն: Ապա քարտում արձանագրվում էին տնտեսատիրոջ հողատարածությունները, սեփականի, համայնականի, ծխականի, վարժակալածի, զնածի շափելը, տեղեկություններ էին հաղորդվում նաև նրա ցանքատարածությունների մա-սին, նշելով այս կամ այն կուլտուրայի զբաղեցրած տարածությունը, լուսա-բանվում՝ էին այն հարցերը, թե տնտեսատերը արդյոք վարու՞մ է սեփական տնտեսություն, ո՞րտեղ է իրացնում արտադրած մթերքները և այլն: Քարտում ուշադրություն էր դարձվում տնաեսատիրոջ ընտանիքում նղած զերիների, փախստականների և մասնավորապես նրա կողմից վարժված բատրակների կամ գյուղական բանվորների թվաքանակի վրա: Արձանագրվում էին նաև տնտեսա-տիրոջ ունեցած անասունների /ծիերի, եղների, կովերի, զոմեշների, ուլ-տերի, ջորիների, եշերի, ոչխարների, այծերի, խոզերի և այլն / զլիքա-նակը, տարիքը, գյուղատնտեսական գործիքներն ու մեքենաները /գութաններ, արորներ, ցանիշներ, հնձիշներ, կալսիշներ, քամհարներ, ֆուրզոններ, սայլեր, փոշխեր / և այլն:

Միաժամանակ մարդահամարը ուսումնասատիրում էր տնտեսատիրոջ բյուջեն, պարզելով նրա բերքի, զնածի, փոխ առածի, կամ պարտը տվածի, աշխատանքի դիմաց վարժատրածի, կողմանակի վաստակի, սերմի, վաճառած մթերքների, հա-ցամթերման, խանութ հանձնածի, ընտանիքի անդամների և անասունների վրա ծախսածի, կուտակածի, մի խոսքով ամբողջ ելք ու մուտքի շափերը:

Զարտի հետ միասին տրվում էր „Հիմնական մթերքների պարենավորման ու կերի մուտքի և ելքի հաշվառումը,, /,, Սպառ որոշակ և բարեկարգ համար համար կամ ծեծածը, զնածը, պարտը վերցրածը, աշխատանքի դիմաց ստացածը և այլ բնույթի վաստակները /, ելքը /սերմը, վաճառածը, պարտը տվածը, պար-տքի դիմաց վնարածը, հացամթերումների խանութ հանձնածը, ընտանիքի ան-դամների և անասունների համար պահածը և այլն /, քարտի լրացման ժամանակ կանվիկ մնացածը /հացահատիկի, չյուրի, ծավարի և այլ վիճակում/:

Այդ փաստաթղթում պետք է զրի առնվեհին նաև ընտանիքի ծախսածը /1տար-վա և 1 ամսվա ընթացքում /, թե նրա անդամներից ով է տարագրվել, ինչքան ժամանակով, այդ ընտանիքը բանի մարդ է վարծիլ, ինչքան ժամանակով: Այնուհետև պետք էր տեղեկություններ հավաքել անառնապահությունը յան մասին,

Նշելով անասնատեսակները, նրանց կերի չափերը, հատկապես ծմբանը և այլն: Քարտօքին կցվում էին նաև ծանոթագրություններ / Արմենիա /, որոնք պահանջում են տվյալներ հավաքել գյուղացու ընտանիքի բոլոր անդամների՝ աշխատունակների և ոչ աշխատունակների, վարձու աշխատողների և արհեստագործությունների մասին: ծանոթագրությունները ապա առաջարում են նյութեր հավաքել գյուղացիների անասնատեսակների, հողատիրության, այլ թվում հողաբժինների, վարձակալած ու զնած հանդակների, պիտանի և անպետք հողերի, ջրաբրի ու ոչ ջրաբրի արտերի, առանձին կուլտուրաների տակ դրվագ տարածությունների, տնամերձերի, այգիների, վարելահողերի, մարզագետիների, խոտհարքների, արոտավայրերի, անտառների, գյուղատնտեսական գործիքների ու մեղենաների և բազմաթիվ այլ հարցերի մասին:

Բացի այդ ծրագրերից, մարդահամարի դեկավարները ստեղծել էին նաև , յ՛նակավայրային բլանկ, / Խոսելողնակ և առաջ պետք էր զրի առնել, թե տվյալ բնակավայրը / գյուղը, առևլը, քոչվորական կամ կիսարշագիրական օքան / ո՞ր նահանգում, զավառում կամ օկրուզում է գտնվում, ո՞րն է խոսակցական լեցուն, ի՞նչքան հեռու է գտնվում զավառային կենարոնից, երկաթգծից, գիշանդանոցից, դպրոցից, ուր է արտահանում իր արդյունքները կամ մթերքները, ինչ ծանալարհներ ունի, ո՞րտեղից է ջուր վեցնում, ի՞նչ առեւրապրդյունաբերական ժեռնարկություններ ունի, երբ է կազմավորվել, որտեղից են նկել նրա բնակիչները, որքան է նրանց թիվը, ի՞նչ չափեր ու կշիռներ ունի, ի՞նչ հողատեսակներ ունի, ո՞րքան է նրանցից յուրաքանչյուրի տարածությունը:

Ապա պահանջվում էր արծանագրել, թե բնակավայրը հողատիրության ո՞ր ծեփ է օգտվում, ժառանգականության ինչ կարգ է սահմանել, կիրառում՝ էրանությունը ու վաճառք, ի՞նչպես է օգտվում ոռոգելի ջրերից, ի՞նչ սկզբունքներով է հողը վարձակալում, ի՞նչքան ժամանակով, ի՞նչ է արտադրում վաճառքի համար, ո՞րտեղ է վաճառում, ի՞նչ արտատնտեսական գրադարներ ունի, ի՞նչքան է ցանում, ի՞նչքան հավաքում և այլն, և այլն:

Այդ բոլոր փաստաթղթերը առաջարում են հարյուրավոր հարցեր, որոնց լրիվ պատասխանները սպառիչ կերպով ներկայացնեն հայ գյուղի սոցիալ-տնտեսական կյանքը հանրակետության կազմակերպման նախօրյակին: Ճիշտ է, այդ փաստաթղթերում կան բազմաթիվ կրկնություններ, բայց առաջ են ցավում նաև նոր խնդիրներ, որոնք զալիս են լրացնելու նախորյաների բացերը և նպաստելու ընդհանուր հիմնարացի լուսաբանանը:

Ցավոց, Արևելյան Հայաստանում միջոցների և համապատասխան կաղըերի պակասի պատմառով պատասխանեցին փաստաթղթերում առաջարկած հարցերի միայն մի մասին և շրջանցեցին բազմաթիվ գյուղեր: Ավելին՝ համար լրիվ շեին նույնիսկ շոշտիք հարցերի պատասխանները: Դրա հետևանքով լաց մասցին գյուղացիների ծննդավայրերի, տեղաշարժերի, նկատությունների և ծախտերին ու դրանք մասերի պարզաբանումները, որոնց լուծարությունը

կտար հանգամանորեն լուսաբանելու նրանց միզրացիայի, վիճակի, շու-  
կայական հարաբերությունների մեջ ներքաշման և այլ պրոբլեմները:

իրերի նման պայմաններում մենք հարապոր: Համարեցինք  
մշակել 1917 թ. մարդահամարի այն տվյալները, որոնք հիմք են տալիս  
հանգելու որոշակի եզրակացության:

○ ○ ○

Կենարոնական Ռուսաստանում 1917 թ. մարդահամարի նյութերը մշակ-  
վեցին ու հրատարակվեցին 1922-1923 թթ.: Ռուս մասնագետները վերլու-  
ծեցին երկրի սոցիալ-տնտեսական ու, կուլտուրական կյանքի քաղմաթիվ հար-  
ցակը<sup>1</sup>:

Անդրկովկասում 1917 թ. մարդահամարի տվյալները փորձեցին մշակել  
ու ընդհանրացնել 1918 թ.: Ռուսաստանի հողագործության մինիստրությունը  
հանձնարաց այդ զորքը համակովկաս յան պարենային վարչության վի-  
ճակագրական ըաժնին, որը, սակայն, գիտակցելով հարցի ըարդությունն  
ու պատասխանատվությունը, խուսափեց նրա կառարումից և հարկ համարեց  
ըննարկել այն համակովկաս յան վիճակագիրների համագումարում: Հզավիր-  
ված համագումարը կազմեց մարդահամարի տվյալների մշակման ծրագիրը,  
որոշեց նրա կենսագործման եղանակները և ընթացիկ աշխատանքների դեկա-  
վարման համար ընտրեց կենարոնական քյուրո: Երբ Անդրկովկասը քածանվեց  
անկախ հանրապետությունների, այդ բյուրոն դադարից գոյություն ունենա-  
լուց:

Սակայն Վրաստանում աշխատանքները շարունակվեցին Ֆ.Ն. Մախարա-  
ծեի ու Ա.Մ. Գոնչարովի ղեկավարությամբ և Ե.Գ. Աստիանիի ու Ե.Լ.  
Ցակորաշվիլի Զիզողիծեի հսկողությամբ: Արդյունքները հրատարակվեցին  
Թիֆլիսում 1922 թ. առանձին գրքով /Վրացերեն ու ռուսերեն լեզունե-  
րով/, որի առաջարանը գրեց Կենարոնական վիճակագրական վարչության կա-  
ռուակարիչ Գ. Գրիգորյանը<sup>2</sup>: Այդ գրքում մշակվել են քարտերում եղած ոչ  
թի քոլոր, այլ միայն մի քանի տվյալները, որոնք լույս են սփոռում  
Վրաստանի ազգարնակչության թվաքանակի, հողատիրության, հողօգտագործ-  
ման ծեների, անասնապահության և այլ հարցերի վրա: Ստվերում են մնում  
քնակչության սոցիալական կառուցվածքի և քաղմաթիվ այլ կարենոր պրոբլեմ-  
ներ: Խնչ խոսք, որ հեղինակների կատարած գործը մակերեսային էր, չեր  
քավարարում նույնիսկ այն ժամանակի գիտության պահանջներին:

1 Տես "Экономическое расслоение крестьянства в 1917-1919 гг.", м.  
1922. "Труды центрального статистического управления", т.У, вып. 11,  
отдел сельскохозяйственных переписей. Поуездные итоги юго-западной  
свой сельскохоз. и позем. переписи 1917 г. по 57 губ. и обл. М., 1923,  
т.УД-IX.

2 "Поуездные итоги сельскохозяйственной и поземельной переписи  
1917 г.", издание центрального статистического управления ССР  
Грузии", Тбилиси, 1922 г.

1917 թ. մարդահամարի տվյալները որոշ մշակման ենթարկվեցին նաև Աղբյուջանում: Աշխատանքներն սկսվեցին հանրապետության կենտրոնական վիճակազրության վարչության կողմից 1924 թ. և ավարտվեցին 1925 թ.: Դրանք կատարում էին Վ. Սմիրնովը, Վ. Ալիշևսկին և ուրիշները: Տվյալները դասավորել էին ըստ հանրապետության աշխարհագրական շրջանների, նպատակ ունենալով պարզել յուրաքանչյուր շրջանի բնակիչների, տնտեսությունների թիվը, գարելահողերի տարածությունները, մեկ տնտեսության հողաքանչի չափը, զյուղատնեսական կուլտուրաների ցանքատարածությունները, անասունների գլխաքանակը և այլն<sup>1</sup>: Աղբյուջանի մարդահամարի այդ մշակումը նույնպես պիտի համարել անբավարար: Ուրիշ մշակումներ, ինչպես Վրաստանի, այնպես էլ Աղբյուջանի 1917 թ. մարդահամարի տվյալների վերաբերյալ մեզ անհայտ են:

Այլ եղավ, սակայն, այդ մարդահամարի տվյալների մշակման ընթացքը չայաստանում: Աշխատանքները, ինչպես ասվեց, սկսվեցին Թիֆլիսում, 1918 թ., բայց քաղաքական հայտնի իրադարձությունների պատճռով հետաձգվեցին: Վ.Ն. Ղազախեց յանի հրապարակած աղյուպային նյութերից իմանում ենք, որ 1919 թ. մայիսին Հայաստանի Մինիստրների խորհուրդը, լուսելով պարենավորման մինիստրի գեկուցումը հանրապետությունում 1917թ. մարդահամարի նյութերի մշակման մասին, որոշում է. Հանձնարարել պարենավորման մինիստրին՝ Նախարարի ներկայացնել մինիստրների խորհրդին այդ հարցի մասին,<sup>2</sup>: Շուտով Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանը ժեռնամուխ է լինում այդ որոշման իրագործմանը և 1919 թ. սեպտեմբերի 2-ին գեկուցում է կառավարությանը, որ Վրացական իշխանություններն արդեն իր տրամադրությանն են հանձնել նրեանի նահանգի ու Կարսի մարզի նյութերը և հարցում է կատարում դրանք նրեան ուղարկելու կամ Թիֆլիսում թողնելու մասին: Նույն թվի սեպտեմբերի 13-ին նա ստանում է Հայաստանի կառավարության պատասխանը, ուր ասվում է. Շուտափության հիշյալ նյութերը ուղարկել նրեան....:

Սակայն նոյեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության հողագործության մինիստրության կենտրոնական վիճակազրության բյուրոյի վարիչ Բ. Իշխանյանը դիմում է հանրապետության հողագործության մինիստրությանը, առաջարկելով, որ նրեանի նահանգի ու Կարսի մարզի մարդահամարի նյութերը մշակվեն ոչ թե նրեանում, այլ Թիֆլիսում: Իր առաջարկությունը հիմնավորում է նրանով, որ նրեանում չկան որակի կադրեր, համապատասխան շենք և տեխնիկական հարմարություններ: Բայց դեկտեմբերի 13-ին Հայաստանի պետական ունեցվածքների ու հողագործության գլխավոր վարչությունը կառավանցան մերժում է նրա առաջարկությունը և պահանջում ան-

<sup>1</sup> "Сельскохозяйственное районирование Азербайджана по материалам сельскохозяйственного переписи 1927 года", Баку, 1986, 7, 1.г. 78:

<sup>2</sup> , Երարքի համարական գիտությունների, 1986, 7, 1.г. 78:

<sup>3</sup> ուշյան տեղում, էջ 79:

հալայ տեղափոխել նյութերը Երևան:

1920 թ. պարիլի 22-ին Հայաստանի Մինիստրների խորհուրդը նորից է անդրադառնում 1917 թ. Մարդաբանական տվյալների մշակման հարցին և ընդառաջում այդ գործի համար մեկ միլիոն ռուբլի վարկ բացելու առաջարկությանը, Նպատակահարմար գտնելով, իրազործումը հետաձգել ավելի բարեհաջող ժամանակի, <sup>1</sup> Հոկտեմբերի 27-ին Բ. Իշխանյանը հայտնում է նախարարին, որ արդեն ճենարկվում է 1917 թ. Մարդաբանական տվյալների մը շակումն ու խնդրում է տրամադրել 5 փութ գրելու և 15 փութ տպագրելու թուղթ: Խնդրանքը կտարագում է, և զործը դեկավարելու համար հրավիրվում է համապատասխան մասնագետ: Սակայն այդ մասնագետը ինչ-ինչ պատճառներով 1920 թ. դեկտեմբերի 20-ին հեռացնում է աշխատանքից: Առջադրանքը կտարագում է Հայկական ԽՍՀ Գյուղատնտեսության ժողովրդական կոմիտարիատի գյուղատնտեսության բաժանունիցի կառավարիչի օգնականը, որը 1921 թ. փետրվարի 11-ին գրում է վերադասին: , Թա՞նի որ վերոհիշյալ պարտականությունը ևս կտարագել եմ իմ անմիջական պարտականություններից և հերթից դուրս, ուստի սրանով խնդրում եմ Ձեզ կարգադրել տալլու ինձ հունվար ամսում վարիչի պարտականությունները կատարելու համար հասանելիք վարձատրությունը, <sup>2</sup>: Մենք չգիտենք, թե ինչ է պատասխանում գրության հասցեատերը, չունենք նաև տեղեկություններ վերոհիշյալ օգնականի կտարան աշխատանքների մասին, ըստ հայտնի է, որ 1917 թ. մարդաբանական ներկանի նահանգի ու Կարսի մարզի տվյալները մնում են անմշակ:

Համենայն դեպք, հիշատակված բանակցությունների ու զրագրությունների դրսիկան արդյունքն այն եղավ, որ նյութերը Թիֆլիսից տեղափոխվեցին Երևան:

Հետագայում խորհրդային մասնագետներից որևէ մեկը չի ճեռարկել նրանց մշակումը: 1960-ական թվականներին առաջին քայլն այդ ուղղությամբ կատարեց Մ.Հ. Աղոնցը, որը ՀԽՍՀ ԿՊԿ Ա 127 /այժմ 125/ Ֆոնդի /ուր պահպահում են 1917 թ. մարդաբանական նյութերը/ 7 գործի հիման վրա փորձեց ցույց տալ հողագուրեկների և անսանազուրկների տոկոսը Երևանի նահանգում ու Կարսի մարզում<sup>3</sup>: Դա, իհարկե, խիստ անքափարար է:

1970-ական թվականների վերջերին այլ նյութերին անլրադապ Ա.Կ. Վարդանյանը, ջանալով նրանց մի մասի տվյալներով ներկայացնել գյուղացիության սոցիալական շերտավորումն ու վարծու աշխատանքի կիրառումն Արևելյան Հայաստանում<sup>4</sup>:

Ծի ուշ՝ 1982 թ. 1917 թ. մարդաբանական նյութերի մշակման ուղ-

1 Նույն տեղում, էջ 82:

2 Նույն տեղում, էջ 83:

3 Տես Մ.Հ. Աղոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտության միտքը 20-րդ դ. սկզբին, Երևան, 1968, էջ 452-453:

4 Ա.Կ. Վարդանյան. Социально-экономическое положение крестьянства в первом Арабене в годы мировой войны /1914 февраль-1917/, /авторе-  
з. т. 1930, с. 21-22.

ղությամբ նոր քայլ կատարեց Ա.Մ. Հակոբյանը, որը Կարսի մարզի 77 գյուղերի կամ նրա բոլոր գյուղերի 10 օ/օ-ի քարտերի հիման վրա ցույց տվեց Հայաստանի այդ մասում գյուղացիության սոցիալական շերտավորման պատկերը, իբրև ցուցանիշներ վերցնելով գյուղացիների հողաբաժինների, ցանքատարածությունների, վարձակալած ու վարձով տված տարածությունների չափերը, բոլոր անսպունների գլխաթանակը, բարակների թիվը և այլն: Հեղինակը ներկայացնում է գյուղացիության սոցիալական շերտավորման պատկերը մարզում ընակվող տարբեր ազգությունների ու ժողովուրունների մոտ առանձին-առանձին<sup>1</sup>:

Ներկա աշխատության մեջ բերվում են մեր տրամադրության տակ եղած այն նյութերը, որոնք հավաքվել են 1917 թ. Մարդաբանարի ընթացքում նրեանի, էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Շարուբ-Դարալազյացի, նոր Բայազետի, Սուրմալուի զավառներում, Լոռու զավառամասում և Կարսի մարզում: Իսկ Արևելյան Հայաստանի մյուս շրջանների, այն է՝ Զանգեզուրի, Նախիջևանի, Շուշիի զավառների ու հիւան-Շամշալինի տեղամասերի նյութերը, ցավոք, չհաջողվեց հայտնաբերել:

Ավելի պարզ պատկերացնելու համար նշենք, որ 1914 թ. Երեանի, էջմիածնի, Սուրմալուի, Շարուբ-Դարալազյացի, Ալեքսանդրապոլի, նոր Բայազետի զավառներում, Լոռի զավառամասում ու Կարսի մարզում հաշվվում էր 1243341 մարդ, իսկ մենք ուսումնասիրել ենք 547850 մարդու տնտեսություն, այսինքն՝ ընդհանուրի 40 տոկոսից փոքր-ինչ ավելին:

Ապա պիտի նշենք, որ մենք մշակել ենք քարտերում եղած այն տվյալները, որոնք ցույց են տալիս գյուղի ազգային կազմը, տղամարդկանց ու կանանց թվաքանակը, աշխատունակների թիվը, վարելահողերի տարածությունները, բոլոր տեսակի անսպունների գլխաթանակը, վարձակալած ու վարձով տված վարելահողերի տարածությունները, վարձով ու վարձվող տնտեսությունների ու մարդկանց թիվը, առանձնացնելով օրով կամ օրերով, սեզոնով, տարով կամ տարիներով վարձվողներին և տալով բոլորի հանրագումարը, զինակոչվածների ու փախառականների քանակը, կալվածատիրական տրնտեսությունների ընութագիրը, ընակչության դասային կազմը, արդյունագործությունը, գրագիտությունը և այլն:

Մենք բաց ենք թողել գյուղացիների ցանքատարածությունների, գյուղատեսական գործիքների, մեքենաների, հողօգտագործման եղանակների, հողատեսակների, ցանքատեսակների, այգեզործության, տարագնացության կամ արտագնացության և այլ հարցերի վերաբերյալ տվյալները, որոնք կամ իհան թերի են և այդ պատճեռով ընդհանրացման հնարավորություն չեն տվել, կամ վստահություն չեն ներշնչել:

Այսպիսով, Մարդաբանարի առաջարկած բազմաթիվ տվյալներից մենք մշա-  
1 Տես , „Պատմա-բանասիրական հանդես,, , , 1982, №4, էջ 94-105:

կել ենք մի մասը, որոնց հիման վրա կստարված հաշվումները ներկայացնում են Արևելյան Հայաստանի զարգացման սոցիալ-տնտեսական ու մշակութային ընդհանուր պատկերը կապիտալիստական հասարակարգի վերջին և խորհրդային կարգերի հաստատման նախօր յակին:

○ ○ ○

Համառոտակի բնութագրենք այդ պատկերը: Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Սուրմալուի, Շարուր-Դարալազյաղի զավաներում, Լոռու գավառամասում և Կարսի մարզում ուսումնասիրված է 87617 գյուղացիական տնտեսություն 547850 բնակչությամբ: Նրանցից 305550-ը հայեր էին, 176781-ը՝ թաթարներ /այսինքն/ աղբբեջանցիներ և այլ մահմեղականներ/, 28137-ը՝ ռուսներ, 28046-ը՝ եղիներ ու քրդեր և 8836-ը՝ այլ-աղջիներ: Նշված ժողովուրդների յուրաքանչյուր գյուղացիական տնտեսություն ուներ միջին հաշվով 2,73, իսկ յուրաքանչյուր մարդ՝ 0,42 դեսյատին վարելահող: Դա նշանակում է, որ Արևելյան Հայաստանի գյուղացիները տառապում էին սակավահողությամբ, մի հանգամանց, որ աշքի էր ընկնում դեռ XIX դ. վերջին և ավելի սաստկացավ XX դ. սկզբին: Ի.Վ. Սոլոմանինի ըերած տվյալներով 1886 թ. Նոր Բայազետի 45 գյուղերում յուրաքանչյուր տնտեսություն ուներ 8 դես., և յուրաքանչյուր շունչ՝ 0,9 դես., իսկ 1906 թ.<sup>1</sup> համապատասխանարար՝ 5 և 0,6 դես յատին վարելահող<sup>2</sup>: Գյուղատընտես Ա. Արտավենովը 1908 թ. գրում էր, որ Երևանի նահանգում, հատկապես Նրա լեռնային շրջաններում, 5-6 դես յատինը անքափարար է ծուխ պահելու համար: Ինչևէ, 20 տարվա ընթացքում /1886-1906/ գյուղացիների սակավահողությունն Արևելյան Հայաստանում զգալիորեն ուժեղացավ, որը պայմանավորված էր գերազանցապես բնակչության բնակչության աճով ու մշակելի տարածությունների սահմանափակությամբ, իսկ 11 տարի հետո /1906-1917/ այն ավելի քան կրկնապատկվեց:

1917 թ. Մարդահամարի տվյալների հաշվումները ցույց են տալիս, որ գյուղացիության մեջ տոկա էր սոցիալական շերտավորումը: Դա արտահայտվում է ամենից առաջ հողատիրության բնագավառում,

Ըստ № 5 աղյուսակի 7093 տնտեսություն բոլորովին հողագույք էր, 49536 տնտեսություն ուներ մինչև 3 դես յատին վարելահող, 28507-ը՝ 3-9 դես յատին, իսկ 2481-ը՝ 10 և ավելի դես յատին վարելահող: Մարդահամարի ցարաերը ոչ մի պատասխան չեն տալիս այն հարցին, թե որքան վարելահող ունեցողներին կարելի է համարել շքափորներ, միջակներ և հարուստներ:

1 Տես "Պամятная книжка Эриванской губернии на 1908г.", отд. IV, с. 244.

2 Տես "Памятная книжка Эриванской губернии на 1910г.", отд. IV, с. 318.

1884 թ. հողատիրության տվյալները վերլուծելիս, ելնելով քյու-  
շետային տեղեկություններից, մենք չըավոր ենք համարել մինչև 5 դես-  
յատին, միջակ՝ 5-15, իսկ հարուստ՝ 15 և ավելի դեսյատին վարելահող  
ունեցող տնտեսությունները<sup>1</sup>: Հաշվի առնելով այն փաստը, որ 1884-1914  
թթ. ժամանակահատվածում Արևելյան Հայաստանի գյուղական բնակչությունն  
ամել է շուրջ երկու անգամ / Երևանի նահանգում 1886 թ. այն կազմում  
եր 612096, իսկ 1914 թ.՝ 935525 մարդ, նարսի մարզում՝ 1884 թ.<sup>2</sup>  
162018 մարդ, իսկ 1914 թ.՝ 342611 մարդ<sup>2</sup>, իսկ տարածությունը մնա-  
ցել է անփոփոխ, գյուղացիության սոցիալական շնորավորումը որոշելու  
համար այժմ պիտի վերցնել համարյա կրկնակի նվազ շափանիչներ, այն է՝  
չըավորներ համարել բոլորովին հողագույք և մինչև 3 դեսյատին վարելա-  
հող ունեցող տնտեսությունները, միջակներ՝ 3-9 դեսյատին ունեցողնե-  
րին, իսկ հարուստներ՝ 10 և ավելի դեսյատին վարելահող ունեցող տնտե-  
սությունները: Այլպիսի մոտեցման դեպքում չըավորները կկազմեն ուսում-  
նասիրված տնտեսությունների 64,3, միջակները՝ 32,3, իսկ հարուստները՝  
3,4 տոկոսը: Գյուղացիական միենույն խմբերը համարելիս, տեսնում ենք,  
որ 30 տարբա ընթացքում չըավորների տոկոսը բարձրացել է 30,0-ից 64,3-ի,  
միջակներինը, ընդհակառակը, իջել է 63,7-ից 32,3, իսկ հարուստներինը՝  
6,3-ից 3,4 տոկոսի: Այլ կերպ ասած՝ համարյա կրկնակի ավելացել է չըա-  
վորների թիվը և այդքան էլ նվազել է միջակների ու հարուստների թիվը:  
Ապրանքա-կապիտալիստական հարաբերությունների զարգացման պայմաններում  
այդ տեղաշարժերը միանգամայն օրինաշափ են:

Մեր հաշվումները ցույց են տալիս նաև 1917 թ. հողարածինների կենտ-  
րոնացման պատկերը գյուղացիական տարրեր խմբերի ծնուցելում / տես աղյու-  
սակ մ/ 5 /: Ըստ այդ հաշվումների, գյուղացիության 64,6 օ/օ կազմող  
չըավորները տիրում էին հողարածինների 26,4 օ/օ-ին, 32,5 օ/օ կազմող  
միջակները՝ 51,4 օ/օ, իսկ 2,9 օ/օ կազմող հարուստները՝ 22,2 օ/օ:  
Այդ պատկերը բավականին ակնբախ է, մանավանդ, եթե նկատի ունենաք, որ  
ունեւորները մեծ նժկարություններով էին կենարունացնում հողարածինները:  
Հանրահայտ է, որ ցարական իշխանությունները ամեն կերպ ծգում էին պաշտ-  
պանել համայնքը, դրա համար պայքարում էին հողարածինների կենարունացման  
դեմ: Սառը իպինի ռեֆորմը, որ նպատակ ուներ քայլայն գյուղական համայն-

1 Տես Ա.Ս. Համբարյան, Դ.Ա. Մուրադյան, Ա.Հ. Սիմոնյան, Արևելյան.

Հայաստանի պրոլետարիա պատմություն, Երևան 1988, էջ 119:

2 Տես "Сборник Статистических сведений по Закавказскому краю", ч. 1,

1902, стр. 17-24, "Кавказский календарь на 1910г.", стр. 218-269,

"Обзор Карской области за 1884г.", стр. 8.

քը, ստեղծել կուլակային տնտեսություններ և դրանով ամրապնդել ինքնակալության հիմքերը, չեր տարածվում Անդրկովկասի, այդ թվում նաև Արեւելյան Հայաստանի վրա : Նայսրության այս երկրամասում ցարիզմը դեռ շարունակում էր վարել ազգարային իր նախկին քաղաքականությունը և խոշողություն կապիտալիստական կազմավորումներին:

Ունեոր գյուղացիները կենարոնացնում էին հողն իրենց ծեռքերում նաև վարձակալության միջոցով:  $\checkmark$  9 աղյուսակը ցույց է տալիս, որ ուսումնասիրված 87617 տնտեսություններից 14401-ը հող էր վարձակալում, ընդ որում 11029-ը՝ մինչև մեկ դեսյատին ներառյալ, իսկ մնացածը՝ 1 դեսյատինց մինչև 50 դեսյատին և պահելի: Դա նշանակում է, որ գերիշխում էին մանր վարձակալումները : Ըստ երեսույթին հողի և կապիտալի սահմանափակությունը թույլ չեր տալիս ունեորների մեծ մասին ծավալելու պահելի ընդարձակ գործողություններ:

Ուշագրավ է, որ հողի վարձակալությամբ ամենից շատ զբաղվում էին ոռու և հայ հարուստները: Այդ նույն աղյուսակից երևում է, որ 48366 հայկական տնտեսություններից հող էին վարձակալում 8213-ը /170/o/, թաթարական 29618-ից<sup>6</sup> 3789-ը /12 o/o/, ոռուսական 4423-ից<sup>6</sup> 1934-ը /43 o/o/, իսկ քուրդ-եզրիական 3845 տնտեսությունից<sup>6</sup> միայն 102-ը /2 o/o/:

Կարենը է նաև հողը վարձակալությամբ հանձնել՝ ու խնդրի պարզաբնումը:  $\checkmark$  10 աղյուսակը ցույց է տալիս, որ ուսումնասիրված 87617 տնտեսություններից իրենց հողը վարձակալությամբ են տվել 13082-ը, ընդ որում 8632-ը մինչև 1 դեսյատին ներառյալ, իսկ մնացածը՝ 1 դեսյատինց մինչև 50 դեսյատին և ավելի: Դրանց մնշող մեծամասնությունը շքավորներ էին, որոնք ի վիճակի չէինելով մշակել իրենց հողաբաժնները, տալիս էին ողբանք վարձակալությամբ: Բայց հողը վարձակալությամբ տվողներից 378-ը տնտեսություն տալիս էր 10-50 և ավելի դեսյատին : Մրանք արդեն ունեվորներ էին, որոնք օգտվելով սակավանող կամ հողավորելի գյուղացիների կարիքից, գերաղասում էին իրենց հողերը վաշխառուական պայմաններով տալ նրանց, քան կազմակերպել այդ տարածքների վրա սեփական տնտեսություն: Բնորոշ է, որ վաշխառուական պայմաններով հողը վարձակալությամբ տվողների մեջ թաթարները ավելի շատ էին, քան հայերը կամ ուրիները:

Ընդհանրապես պետք է նշել, որ ինչպես Ռուսական կայսրության քաջամարիվ այլ շրջաններում, այնպես էլ Արևելյան Հայաստանում գոյություն ուներ հողի վարձակալման նրկու տեսակը: մեկը հետապնդում էր ծեռնարկչական, մյուսը՝ գոյության պահպանության և պատակները: Առաջինին սովորաբար դիմում էին հարուստները, իսկ երկրորդին՝ սակավանող կամ հողավորելի գյուղացիները:

Վերլուծենք այժմ գյուղացիների ունեցած անսառւնների գլխաբանակի

մասին տվյալները: *✓* 11 աղյուսակից երեսում է, որ բոլոր 87617 տնտեսությունները ունեին 1009163 գլուխ անասուն, այսինքն, յուրաքանչյուր տնտեսություն՝ միջին հաշվով 11,5 գլուխ: Այդ տնտեսություններն ունեին 181556 գլուխ բանող անասուն, այսինքն՝ յուրաքանչյուր տնտեսություն՝ միջին հաշվով 1,5 գլուխ:

Ըստ *✓* 12 աղյուսակի տվյալների, բանող անասուններից գուրկ էր 37745 տնտեսություն, 8973 տնտեսություն ուներ 1-ական գլուխ, 34876 տնտեսություն՝ 2-4-ական գլուխ և 6023 տնտեսություն՝ 5 և ավելի գլուխ բանող անասուն: Եթե առաջին երկու խմբերը համարենք չքավորներ, երկրորդ խումբը՝ միջակներ և երրորդը՝ հարուստներ, ապա տոկոսային ճարարերությամբ չքավորները կազմեն 53,2, միջակները՝ 39,7, իսկ հարուստները՝ 6,5 օ/օ: Այս տվյալները համարյա համընկնում են հողատիրության բնագավառում գյուղացիության սոցիալական շերտափորմանը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ 2 գլուխ բանող անասուն ունեցող գյուղացիության զգալի մասը ոչ թե միջակ էր, այլ չքավոր:

Հատկանշական է, որ հարուստները, կազմելով գյուղական բնակչության չնշին մասը, իրենց ծեղծերում էին կենտրոնացրել նաև բանտիր անսունների գլխաքանակի որոշակի մասը, մինչդեռ չքավորները, կազմելով գյուղացիության մեծամասնությունը, տիրում էին այդ անասունների չնշին տոկոսին: *✓* 12 աղյուսակից երեսում է, որ գյուղական բնակչության 53,2 օ/օ կազմող չքավորների ծեղծերում էր գտնվում բանող անասունների գլխաքանակի միայն 6,8 օ/օ, մինչդեռ 6,5 օ/օ կազմող հարուստների՝ ծեղծերում՝ 27,0 օ/օ:

Գյուղացիության սոցիալական շերտափորմը կարելի է ներկայացնել նաև բոլոր անասունների գլխաքանակի մասին տվյալներով: *✓* 16 աղյուսակը ցույց է տալիս, որ գյուղացիական 49397 տնտեսություն /56,1 օ/օ/ կամ շունի կամ ունի մինչեւ 4 գլուխ, 35441 տնտեսություն /40,2 տոկոսը/՝ 5-50 գլուխ և, վերջապես, 2779 տնտեսություն /3,2 օ/օ/՝ 51 և ավելի գլուխ ամեն տեսակի անասուն: Եթե առաջին խումբը համարենք չքավորներ, երկրորդ՝ միջակներ և երրորդը՝ հարուստներ, ապա չքավորները կազմեն ուսումնասիրված տնտեսությունների 56,1 օ/օ, միջակները՝ 40,2 օ/օ, իսկ հարուստները՝ 3,2 օ/օ: Այս տվյալները նույնականացնելում են այն արդյունքներին, որոնք ստացվեցին գյուղացիության սոցիալական շերտափորմուն բանող անասունների գլխաքանակի մերլուծելիս:

Ավելի արտահայտիչ է բոլոր տեսակի անասունների գլխաքանակի կենտրոնացումը գյուղացիական տարրեր խմբերի ծեղծերում: *✓* 16 աղյուսակից երեսում է, որ 56,1 օ/օ կազմող չքավորները տիրում են բոլոր անասունների գլխաքանակի 8,0 օ/օ, 40,2 օ/օ կազմող միջակները՝ 5,9 օ/օ, իսկ 3,2 օ/օ կազմող հարուստները՝ 25,5 օ/օ-ին:

Մի խոսքով , ինչպես հողատիրության , այնպես էլ անասուն-ների վերաբերյալ տվյալների վերլուծությունը ցույց է տալիս , որ Արևելյան Հայաստանի գյուղում 1917 թ ., առկա էր սոցիալական խորը շերտավորում :

Հասարակության սոցիալական շերտավորումը սովորաբար առաջանում է մինչկապիտական ժամանակաշրջանում և խորանում կապիտալիստական արտադրության պայմաններում : Կապիտալիզմի գլխավոր ու հիմնական ցուցանիշը , ինչպես հայտնի է , վարձու աշխատանքի կիրառումն է : 1917 թ . մարդարամարի նյութերը արժեքափոր տեղեկություններ են տալիս նաև այդ մասին : Ըստ մ/ 20 աղյուսակի տվյալների Արևելյան Հայաստանում ուսումնասիրված 87617 գյուղացիական տնտեսություններից 17301-ը /շուրջ 20 օ/օ վարձում էին բարակներ կամ գյուղական պրոլետարներ : Վարձող-ներից 9555-ը հայեր էին , 5514-ը թարածներ , 1390-ը ոռուսներ , 309-ը եզրիները կամ քրդեր և 533-ը՝ այլազգիներ : Այդ տվյալները ցույց են տալիս , որ հայ հարուստներն ավելի շատ էին վարձում բարակներ , քան մյուս բոլոր ազգությունների հարուստները միասին վերցրած : Ուշեմն արևելահայ գյուղում տիրապետում էր հայկական բուրժուազիան :

Գյուղական բուրժուազիան զարգացած էր հատկապես նրեւանի , էջմիածնի , Սուրբմալուի զավառներում , Լոռու զավառամասում և Կարսի մարզում , այսինքն՝ երկրի այն շրջաններում , որոնք աչքի էին քննկում առեւթային հողագործության առաջարիմությամբ : Մնացած վայրերում նրա տևակարար կշիռը ցածր էր :

Այժմ խոսենք գյուղական պրոլետարիատի մասին : մ/ 22 աղյուսակի տվյալները ցույց են տալիս , որ հետագութած շրջաններում կար 277020 բարակ , որոնք կազմում էին այլ շրջանների բնակչության ավելի քան 50 օ/օ : Նրանք հարուստների մոտ վարձում էին օրերով , սեզոնով և տարիներով : Գերակշռում էին օրավարձու բանվորները /251127 մարդ/ , աղա՝ սեզոնայինները /22000 մարդ/ և հետո միայն՝ տարով կամ տարիներով վարձիղները -/3893 մարդ/ : Բարակներ ավելի շատ կային նրեւանի , էջմիածնի , Սուրբմալուի զավառներում , Լոռու զավառամասում և Կարսի մարզում , այսինքն՝ այն շրջաններում , ուր համեմատաբար զարգացած էին ապրանքարամական հարաբերությունները և քիչ էին այն վայրերում , ուր այդ հարաբերությունները դեռ թույլ էին զարգացած Ալեքսանդրապոլի և Նոր Բայալեալի զավառներում : Ցանկությունը , Մարդահամարի նյութերը հանրավորություն չեն տալիս որոշելու բարակների ազգային պատկանելությունը : Միայն կարելի է հնֆարբել , որ նրանց մեծամասնությունը հայեր էին :

Ի մի բերելով բուրժուազիայի ու պրոլետարիատի մասին եղած հաշվումները , պետք է նշել , որ հետագութած տնտեսություններում ուր

Հաշվում էր 547350 մարդ, պրոլետար ու կիսապրոլետար գանգվաճները կազմում էին 277020 մարդ, իսկ բուրժուազիան՝ 18201 տնտեսություն։ Եթե անզամ հաշվի շառնենք նրանց ընտանիքի անդամների թիվը, կտևնենք, որ Արևելյան Հայաստանի գյուղում Անկախության հռչակման նախօրյակին գերիշխում էին բուրժուազիան հասարակության երկու հիմնական դասակարգերը։ Մենք նույնիսկ անտեսում ենք այն հանգամանքը, որ միջակ գյուղացիության զգալի մասը նույնպես ներքաշված էր աղքանքաղրամական հարաբերությունների ոլորտը, դարձել էր մանք բուրժուաց։

Հաշվումները ցուցց են տալիս, որ կապիտալիստական հարաբերությունները ամենից շատ թափանցել էին հայերի, իսկ ամենից թիւ եղդիների ու քրդերի՝ մոտ։

1917 թ. մարդահամարը արժեքավոր տեղեկություններ է տալիս նաև կալվածատիրական տնտեսությունների մասին։ Ցավոք մեր ժեռքի տակ կան միայն էջմիածնի զավարի կալվածատերերի վերաբերյալ տեղեկությունները։ Բայց դրանք տիպական են, ուստի նրանց հիման վրա կարելի է դատի երացում կազմել ամբողջ Արևելյան Հայաստանի բնակչության այդ շերտի մասին։

Էջմիածնի զավառում ուսումնասիրքել է 32 կալվածատիրական տնտեսություն, որից 12-ը հայ, 20-ը՝ թաթար։ Նրանք միասին ունեցել են 748 դեսյատին կամ ամեն մի տնտեսություն միջին հաշվով 23,3 դեսյատին հող։ Վ 26 աղյուսակը ցույց է տալիս, որ երկու ազգությունների կալվածատերերի հողային տիրույթների շափերի մեջ եղել է չնշին տարբերություն։ Տարբերությունը չնշին է եղել նաև հողի վարձակալության և վարձատվության բնագավառներում։

Հայ և թաթար կալվածատերերն ունեցել են ընդամենք 434 զլուխ անասուն։ Հայերի 4 տնտեսություն չեն ունեցել անասուն, թաթարների՝ 2 հայերի 6 տնտեսություն ունեցել են 2-ից 20 զլուխ անասուն, թաթարների՝ 14 տնտեսություն։ Հայերի 2 տնտեսություն ունեցել են 20-ից 100 զլուխ անասուն, թաթարների՝ 4 տնտեսություն։ Պատկերը համարյա այսպիսին էր նաև բանող անասունների հարցում։ Հայերի 5 տնտեսություն շուներ բանող անասուն, թաթարների՝ 2-ը, հայերի 4 տնտեսություն ուներ 2-ական բանող անասուն, թաթարների՝ 10-ը, հայերի՝ տնտեսություն ուներ 4 զլուխ բանող անասուն, թաթարների՝ 4-ը։ Հայերի ոչ մի տնտեսություն չուներ 4-ից ավելի բանող անասուն, թաթարների՝ 4-ից ավելի ընտանիք ունեին 2-ը։

Հայ և թաթար կալվածատերերը միասին ունեցել են 157 գյուղ՝ բաղկացած 302 շնչից, որոնցից 164-ը տղամարդ, իսկ 138-ը՝ կին։ Ցավոք, տվյալները լուսաւ են այն մասին, թե հայ ու թաթար կալվածատերերը ինչպիսի՞ և ինչքան ունետա են տաղել, այդ գյուղերից, ուայց այլ աղբյուրներից ու գրականությունից գիտենք, որ նրանք համարում են գյուղագինե-

թից ունտայի քոլոր տեսակները, որոշ տեսակներ շատ, մյուսները՝ թիւ չափերով<sup>1</sup>:

Հաշվորդներն արծանազրել են, որ գավառի 32 կալվածատերերից 13-ը կիրառել են վարձու աշխատանք: Նրանցից 11-ը եղել են հայ, իսկ 2-ը՝ թաթար: Բայց թաթարները օգտագործել են միայն օրավարձու աշխատանք, իսկ հայերը պահել են և օրավարձու, և սեզոնային, և տարով կամ տարիներով վարձվող բարակներ, ընդ որում 5-ը վարձել են օրերով, 2-ը՝ սեզոնային և 4-ը՝ տարով կամ տարիներով:

Այսովում, մարդահամարի տվյալները ցույց են տալիս, որ էջմիածնի գավառում զերիշխել է մանր կալվածատիրական հողատիրությունը, որ հայ ու թաթար կալվածատերները զտնվել են համարյա միենույն վիճակում, վարել են իրենց տնտեսությունը միջնադարյան եղանակներով կամ ուղղակի չեն վարել այն, չեն նշաստել արտադրության զարգացմանը, միայն փորձեր են կատարել անցնել կաղիտալիզմին, կիրառելով իրենց տնտեսություններում մասնակի վարձու աշխատանք, ընդ որում հայերն՝ պետք շատ, իսկ թաթարները՝ անհամեմատ թիւ: Այլ ամենը բնորոշ են եղել Արևելյան Հայաստանի նաև մյուս շրջանների կալվածատիրությանը՝ մի տեղում թերևս մեծ, մյուսում՝ փոքր չափերով:

○ ○ ○


1917 թ. հրատարակվեց նաև Համառուսաստանյան քաղաքային մարդահամարի հրանգ<sup>2</sup>, ըստ որի, մարդահամարը պետք էր անցկացնել երկրի քոլոր քաղաքներում, քաղաքատիպ ավաններում, գործարաններում ու ֆաբրիկաներում, լուսահանքերում, տոնավաճառներում ու առևտրական այլ օբյեկտներում, երկաթգծերում, գորամասերում և այլ տեղերում: Սակայն այն իրազործվեց երկրի մի մասում, այդ թվում նաև Անլրկովկասում ու Արևելյան Հայաստանում:

Քաղաքային մարդահամարի հրանգի մեջ ասվում էր. որ յուրաքանչյուր քաղաքում կամ ավանում ստեղծվում է բյուրո, որը պետք է անցկացնի մարդահամարը մեկ օրում: Առաջնորդկելով հրանգով, հաշվորդը պարտավոր էր

1 Տես Վ.Զ. Ռշտունի, Ուրիվազենք Հայաստանի գյուղացիության պատմության, 1828-1917 թթ., մաս Բ, /1870-1917 թթ., 1968/, Խ.Զ. Ավելարեկյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում /1801-1917 թթ. /, Երևան, 1959, Մ.Հ. Աղոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միաբան ՀՀ դարի սկզբին, Երևան: 1968:

2 Տես "Всероссийская сельскохозяйственная и земельная перепись и всероссийская городская перепись 1917 г. Центральное бюро по переписи на Кавказе при главноуполномоченном М.П. на Кавказе. Инструкция к городской переписи 1917 года на Кавказе", Тифлис, 1917, с. I-16.

4/II  
83093



ԱԿԱДЕՄԻԱ  
1968

զրանցել թե առկա և թե ժամանակավորապես քացակայող բնակիչներին։ Հրահանգում հանգամանորեն ընութեազրկում էր, թե ում պետք է համարել առկա, ում՝ ժամանակավորապես ապրող։ Ամեն մի բնակարանի համար անհրաժեշտ է կազմել մեկ քարտ, նշելով նրա մեջ նահանգի կամ մարզի, քաղաքի կամ ավանի անվանումը, բնակարանատիրոջ, նրա կնոջ, երեխաների, ծառաների ու բանվորների, իր հետ բնակիող ազգականների կամ բարեկամների անուն ազգանունները, ունեցած սենյակների և օժանդակ հարմարությունների թիվն ու չափերը, տարցաման ու լուսավորման եղանակները և այլն։

Մարդահամարի ավարտումից հետո հաշվորդը պարտավոր էր կարգի քերել իր հակաքած նյութերը, մի անգամ էլ ատուզել զրառումները և հանձնել։ Բայց նետ գտներ, թե ինչ-որ տեղ սխալվել է կամ վրիպել, պետք է կը կին այցելեր իր ուսումնասիրած օբյեկտը և վերացներ թույլ տված թերությունները։

Այդ հրահանգույթ հավաքված տեղեկությունները ամփոփեցին երկու քարտում, որոնցից մեկը / Ն 1 ճկ / կոչվեց բնակարանային քարտ, իսկ մյուսը / Ն 2 ճկ / ծխային ցուցակ։

Նշված քարտերի առաջին ճեղում պահանջվում էր ցույց տալ քաղաքացու կապը երկրագործության հետ, նշելով նրա հողերի տարածքն ու անսունների գլխաքանակը, պահանջվում էր նաև ֆիյալներ հաղորդել քաղաքացու ազգության ու զրագիտության մասին, իսկ երկրորդ ճեղում՝ տեղեկություններ հավաքել առեւտրապրդյունաքերական ծեռնարկությունների մասին։ Այդ ճեղը լրացնում են իրար և այսպես թե այնպէս ներկայացնում իրականությունը։

հիարկե, պատկերն ավելի ամբողջական կլիներ, եթե տեղեկություններ հավաքվեին նաև քաղաքային բնակչության դասակարգային կառուցվածքի, հասարակական տարրեր շերտերի կուլտուր-կրթական զարգացման և մի շարք այլ հարցերի մասին։

Ցավոք, մենք չգիտենք, թե 1917 թ. քաղաքային մարդահամարն արդյո՞ք Արևելյան Հայաստանի բոլոր քաղաքներում է անցկացվել։ Մեր ծեռքի տակ կան միայն Երևանի, Կարսի, Արդահանի, Օլթիի, Կաղզիվանի ու Սարիղամիշի նյութերը, որոնք թերի են, այսինքն՝ ներկաացնում են այդ քաղաքների բնակչության սոսկ մի մասին։ Ըստ այդ նյութերի, նշված քաղաքներում ընակվել են 3512 ընանիք՝ 18870 երկու սետի բնակչությամբ։ Հայերի հետ միասին ապրել են թաթարներ, ուռւներ, հույներ, վրացիներ և այլ ազգերի ներկայացուցիչներ։ Հայերը կազմել են 14236, թաթարները՝ 1394, ուռւները՝ 1728, հույները՝ 946, վրացիները՝ 354, իբր այլազգիները՝ 212 մարդ։

Հաշվորդներն արձանագրել են, որ նշված քաղաքներում եղել են 1327 ժամանակավոր բնակիչներ, որոնց մեծ մասը՝ Կարսում ու Սարիղամիշում։ Ըստ երեսութիւն, դրանք եղել են զինվորականներ, օրավարժութեազգիների և այլն։

